

Բեղմնականիս մեթոդների արդյունավետությունը

Ինչ է հարկավոր իմանալ

Գոյություն չունի բեղմնականիսման որևէ մեթոդ, որն անվերապահորեն կիրառելի և հարմար է բոլորի համար: Սակայն, որևէ մեթոդից կամ միջոցից օգտվելը՝

Այուսակը ներկայացնում է առավել տարածված մի շարք բեղմնականիս մեթոդների (միջոցների) հղիանալուց պաշտպանելու արդյունավետությունը՝ դրանց ճիշտ և տիպային կիրառման դեպքերում:

- **առավել ներդաշնակ է դարձնում ընտանեկան հարաբերությունները,**
- **զերծ է պահում առողջական բազմաթիվ խնդիրներից,**
- **թույլ է տալիս հոգ տանել զույգի և նրանց երեխաների առողջության մասին,**
- **ապահովում է կյանքում կարևորագույն որոշումներից մեկի իրականացման հնարավորությունը՝ ե՞րբ և քանի՞ երեխա ունենալ,**
- **և, վերջապես, յուրաքանչյուր հղիություն դարձնում է սպասված ու ցանկալի:**

Եթե անգամ հաշվի առնենք ժամանակակից հակաբեղմնավորիչների թերությունները, այնուամենայնիվ, դրանք ավելի արդյունավետ ու հատկապես անվտանգ են, քան հղիության ընդհատումը (աբորտ) ոչ միայն բժշկական, այլև սոցիալական կոչված՝ «ժողովրդական», երբեմն զավեշտալի ու հաճախ կյանքի համար խիստ վտանգավոր մեթոդներից ու ձևերից:

Բեղմնականիսման միջոցների օգտագործման առավելություններն ու օգտակարությունը հաստատվում են սակայն բժշկական վստահելի հետազոտությունների տվյալներով:

Միջոցը կամ մեթոդը	Տիպական կիրառման դեպքում	Ճիշտ կիրառման դեպքում
Իմպլանտ	99.95%	99.95%
Ներարգանդային պարույր (հորմոնալ)	99.8%	99.8%
Ներարգանդային պարույր (պոլիմեր)	99.2%	99.4%
Դեպո-Պրովերա (միայն պրոգեստին հորմոն)	94%	99.8%
Կոմբինացված հաբեր (էստրոգեն և պրոգեստին հորմոններ)	91%	99.7%
Լակտացիոն ամենորեայի մեթոդ (բացառապես կրծքով կերակրում)	>92.5%	>98%
Դիաֆրագմա և սերմնասպաններ	88%	94%
Պահպանակ (տղամարդու)	82%	98%
Սերմնասպաններ	79%	97%
Ընդհատված սեռական հարաբերություն	78%	96%
Օրացուցային		91%
Որևէ մեթոդից չօգտվելը	15%	15%


հանուն

առողջ

ԸՆԳՄԱՆԻՔԻ

Տվյալների աղբյուրը՝ James Trussell IN Hatcher; Contraceptive Technology, 20th Edition, 2011 and Adapted from WHO 2007-2013

Սույն տեղեկատվական թերթիկը ստեղծվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՀԳ) և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ: Տեղեկատվական թերթիկում արտահայտված տեսակետները հեղինակային են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄՀԳ, ԱՄՆ կառավարության կամ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի տեսակետները:



Ինչ է հարկավոր իմանալ ՀԱՆՈՒՆ ԱՌՈՂՋ ԸՆՏԱՆԻՔԻ

Առողջ ընտանիքը ոչ միայն ֆիզիկապես առողջ ամուսիններն ու երեխաներն են, այլ նաև ամուսինների միջև հարաբերություններում փոխադարձ վստահությունը և սերը: Սերն ու վստահությունը հոգեկան ու սեռական ներդաշնակ միջավայր են ձևավորում ընտանիքում, ուր ամուսինները կարող են լիարժեքորեն իրացնել իրենց հոգևոր ու ֆիզիկական միասնությունը, ուր կարող է ծնվել և դաստիարակվել առողջ ու հաջողակ սերունդ՝ սպասված և ցանկալի երեխաներ:

Իդեալական կլիներ, եթե կինը հղիանար այն ժամանակ, երբ ցանկանում է: Ավաղ, միշտ չէ, որ այդպես է: Դարեր շարունակ մարդիկ անցանկալի հղիությունից խուսափելու միջոցներ են փնտրել: Ձևավորվել է թյուր կարծիք, որ շատ ավելի հեշտ է աբորտի դիմել, քան ջանքեր ու միջոցներ գործադրել անցանկալի հղիությունը կանխելու համար: Մինչդեռ, հղիության արհեստական ընդհատումը (աբորտը), հատկապես անօրինական կատարված կամ կնոջ կողմից հրահրված, կարող է առաջացնել կնոջ սեռական օրգանների վնասում, բորբոքային հիվանդությունների զարգացում, ինչպես նաև անպտղություն, արյունահոսություն, սեպսիս, սեպտիկ շոկ և անգամ մահ:

Անցանկալի հղիության նկատմամբ վախը հաճախ հոգեբանական սթրեսի լուրջ գործոն է հանդիսանում և ուղեկցվում զույգի սեռական ու հոգեբանական աններդաշնակությամբ: Վարքագծային նման դրսևորումները պարունակում են անցանկալի և լուրջ վտանգներ ո՛չ միայն սեռական, վերարտադրողական, այլ նաև ընդհանուր առողջության համար:

Հո՛գ տարեք Ձեր, ամուսնու (զուգընկերոջ), երեխաների առողջության պահպանման մասին:

Բեղմնականիման մեթոդը ճիշտ ընտրե- լու և օժանդակություն ստանալու համար խորհրդակցե՛ք տեղամասային մանկա- բարձ-գինեկոլոգի կամ ընտանեկան բժշկի հետ:

Բեղմնականիման մեթոդներ և միջոցներ

Լակտացիոն ամենորեայի մեթոդ (բացառապես կրծքով կերակրում)

- հետծննդյան առաջին 6 ամիսների ընթացքում դադարեցնում է կնոջ օրգանիզմում ձվագատում առաջացնող հորմոնների արտադրությունը և պաշտպանում է կնոջը հղիանալուց,
- ապահովում է երեխային անփոխարինելի սննդով, պահպանում նրա ներդաշնակ զարգացումը, բարձրացնում երեխայի դիմադրողակա- նությունը, պաշտպանում վարակներից,
- անվճար է, նյութական լրացուցիչ միջոցներ չի պահանջում:

Պահպանակը՝

- միակ միջոցն է, որը պաշտպանում է և՛ անցան- կալի հղիությունից, և՛ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններից,
- ձեռք բերելու համար դեղատոմս կամ բուժզննում չի պահանջվում,
- ունի միայն տեղային ազդեցություն, չունի բացասական ազդեցություն օրգանիզմի վրա,
- կարող է օգտագործվել հղիության ընթացքում, անմիջապես աբորտից և ծննդաբերությունից հետո, ինչպես նաև կրծքով կերակրման ընթաց- քում:

Ներարգանդային պարույրը (սպիրալ)՝

- մեկանգամյա տեղադրմամբ ապահովում է հղիության արդյունավետ և երկարաժամկետ կանխում,
- բացարձակ չի խանգարում սեռական հարաբե- րությանը,
- երկարատև է և չկա հաճախակի փոխելու անհ- րաժեշտություն,
- կարող է տեղադրվել նաև ծննդաբերությունից և աբորտից անմիջապես հետո:

Հորմոնային բեղմնականիսիչ հաբերը՝

- դաշտանը դարձնում են ավելի կանոնավոր, չա- փավոր արյունային արտադրությամբ և անցավ, պահպանում են սեռական օրգանների մի շարք

- հիվանդություններից,
- կինը կարող է գործածել երկար ժամանակով, առանց ընդմիջումների,
- կինը ցանկացած պահի կարող է դադարեցնել հաբերի ընդունումը:

Օրացուցային մեթոդը՝

- պահանջում է մշտապես հետևել կնոջ դաշտանային ցիկլին և բացահայտել կնոջ պտղաբեր շրջանը, որի ընթացքում կինը կարող է հղիանալ,
- պահանջում է գրանցել կնոջ դաշտանային ցիկլի տևողությունը առնվազն 6 ամսվա ընթացքում և ամենակարճ տևողությունից հանել 18 օր՝ այդպիսով որոշելով կնոջ առաջին պտղաբեր (անապահով) օրը, իսկ ամենաերկարից հանելով 11 օր՝ որոշելով վերջին պտղաբեր (անապահով) օրը,
- չի պահանջում բժշկի միջամտություն:

Ներարկվող բեղմնականիսիչ միջոցները՝

- նվազեցնում են արյան կորուստը դաշտանի ժամանակ (մեծ առավելություն է սակավարյու- նությամբ և արյունահոսություններով տառապող կանանց համար),
- նվազեցնում են Էնդոմետրիումի քաղցկեղի, փոքր կոնքի օրգանների բորբոքային հիվան- դությունների և արտարգանդային հղիության առաջացման վտանգը,
- ունեն երկարատև ազդեցություն. մեկ ներարկու- մը բավարար է 3 ամիս պաշտպանվելու համար:

Հեշտոցային պատնեշային միջոցները՝

- ունեն միայն տեղային ազդեցություն, չունեն ազ- դեցություն օրգանիզմի վրա:

Ներկայացված բեղմնականիման մեթոդների կամ միջոցների օգտագործումը դադարեցնելու դեպքում պտղաբերությունը վերականգնվում է անմիջապես կամ որոշ ժամանակ անց:

Բեղմնականիման մեթոդների ընտրությունը պահանջում է ամուսինների անմիջական, համատեղ և պատասխանատու ներգրավվածություն: